ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Զինծառայողների պարտականությունները զինվորական կարգապահության պահպանման գործում

1. Զինվորական կարգապահությունը պարտավորեցնում է յուրաքանչյուր զինծառայողի՝

1) հավատարիմ լինել զինվորական երդմանը, խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջները.

2) իր զինվորական պարտքը և գործառնական պարտականությունները, օրվա կարգացուցակով նախատեսված միջոցառումները կատարել լիարժեք, բարեխղճորեն և արիաբար, պատշաճ ձևով ուսումնասիրել ռազմական գործը, պահպանել ռազմական և պետական գույքը.

3) աննկուն կրել զինվորական ծառայության դժվարությունները, անմնացորդ նվիրվել զինվորական պարտքի կատարմանը.

4) լինել զգոն, խստորեն պահպանել պետական ~~և ծառայողական~~ գաղտնիքը.

5) պահպանել զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունները, ամրապնդել զորային ընկերականությունը.

6) հարգել հրամանատարներին (պետերին) ու միմյանց, պահպանել զինվորական բարեկրթության և ողջույնի կանոնները.

7) թույլ չտալ զինծառայողի պատիվն արատավորող արարք:

2. Զինվորական բարձր կարգապահության ապահովման միջոցներն են՝

1) զինծառայողների մեջ բարոյակամային ու մարտական հատկանիշներ դաստիարակելը, հրամանատարներին (պետերին) գիտակցաբար ենթարկվելը.

2) իր պարտականությունների և զինվորական կանոնագրքերի պահանջների կատարման համար յուրաքանչյուր զինծառայողի անձնական պատասխանատվության գիտակցումը.

3) զորամասում (ստորաբաժանումում) ներքին կարգուկանոնի պահպանումը.

4) մարտական պատրաստության հստակ կազմակերպումը և այդ գործում ամբողջ անձնակազմի ընդգրկումը.

5) ենթակաների նկատմամբ հրամանատարների (պետերի) ամենօրյա պահանջկոտությունը, նրանց արժանապատվության հարգումը, նրանց հանդեպ մշտական հոգատարությունը, համոզման, հարկադրանքի և զինվորական կոլեկտիվի հասարակական ներգործության միջոցների հմուտ զուգորդումն ու ճիշտ կիրառումը.

6) զորամասում (ստորաբաժանումում) անհրաժեշտ նյութական-կենցաղային պայմանների ստեղծումը: